09 APR 2011




ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

| ԽԱ. ՏԱՐԻ 1927 | Տարեկան 1 ստեռլինգ։ | ԹԻՒ 5, ՄԱՅԻՍ |
|---|---|---|

# ԵՒԹԱՂԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

(Շարունակութիւն։)

## ԴԻՐ ԳԼԽՈՑ ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ

Ի Հարցն եւ ի վարդապետաց զաւրինակն եւ զպայման ընկալեալ եւ շահեալ, ձեռն ի գործ արկանեմք նիազութեամբ գլխակարգութեանս։ Աղաչեմք չլինել մեղադիր մերոյ յանդգնութեանս, որ կրսերքս եմք ժամանակաւք եւ ուսմամբ, յիւրաքանչիւր ումեքէ ի ձէնջ որ ընթեռնուցուք, աղաւթէք վասն մեր ըստ մեզ զիջանելոյ լինիցին ձերով աւգնութեամբ։ Եւ արդ դիցուք զայս ըստ պատմութեանն Ղուկայ մատենագրի, սեւագեղով գգլուխն եւեթ եւ կարմրագեղով զմասնաւոր[ս][1] մասս առ նոսին զներքնաբաժինն նշանակեսցուք։ — Տունք ժգ (կամ ժդ)։

1 Սխալմամբ գիր գլխոյ ունին ԱԲԷՈՎEIP, գիր ունին ԳABC եւ Բագր․, իսկ Ռ եւ Կեռլայի օրինակը, Գոմբիկեան, անդ էջ 339, ունին յառաջագիր գլխոյ գործոց առաքելոց։ K գլխոյ ‖ 2 Բ չիք Հարցն, ուր միայն կարմրագիր է, P ի Հարց։ ԱԷBP ի վարդապետացն, I ի սրբոց վարդապետացն, K ի վարդապետութեանցն։ Է զաւրինականն։ ԳԷՌ, ABI եւ Բագր․ զպայմանն, նոյնպէս P յայլմէ գրչէ ի վերայ տողին յաւելեալ։ Բ զպայան, զպայման = τὸν τόπον ‖ 2—3 Ձեռն ի գործ արկանեմք = ἐγχειροῦμεν, տես վերագոյն էջ 140 ‖ 3 Ա նիազութեան, նիազութեամբ = μετρίως. ԱԷ աղաչեմ ‖ 3—4 Աղաչեմք — յանդգնութեանս = αἰτοῦντες συγγνώμην προπετείας ἡμεῖς. ԱԲ որք։ Ա եւ Բագր․ կրսերք, Է կրսեր, Բ կրտսեր = οἱ νέοι. Է ժամանակաւ։ Է միայն ումեքէ, միւսները ---- ‖ 5 Է որք։ Ա ընդ մեզ։ ԱԲԷ ձերովդ աւգնութեամբ ‖ 6 Գ ըստ Սարգիսեանի պատմութեան։ Մատենագրի, յոյնը τοῦ εὐαγγελιστοῦ. Բ սեւագեղովս գգլուխս ‖ 7 Բ զմասնաւոր։ ԲG առ նոսին ‖ 8 Բ նշանակեսցուք, Ռ նշանակելով։ ԲԷ ունին ժգ,

[1] ԲԱՌԱՔՆՆՈՒԹԻՒՆ՝ ինչպէս հոս գործածուած մասնաւոր ածականը (τὰς ἐν μέρει τούτων ἐχομένας ὑποδιαιρέσεις), նոյնպէս Պաւղոսեան Թղթերու գլխակարգութեան մէջ կիրարկուած "եւ են ի

ԴԼՈՒԽՔ ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ

Ա. Վասն առ ի յարութենէ վարդապետութեանն Քրիստոսի եւ երեւելոյ աշակերտացն եւ վասն աւետեաց սրբոյ հոգւոյն պարգեւաց եւ տեսանելոյ եւ պայմանի վերանալոյն Քրիստոսի եւ վասն փառաւոր եւ երկրորդ գալստեան նորա։

Բ. Պետրոսի խաւսք առ աշակերտեալսն վասն մահու եւ խոստմանն Յուդայի մատնչի։ ա. Յորում փոխանակ ընդ նորա մուտն Մատաթեայ վիճակելոյ շնորհաւք ի ձեռն աղաւթից։

Գ. Վասն աստուածեղէն սրբոյ հոգւոյն իջանելոյ յաւուրն պենտեկոստէից ի վերայ հաւատացելոցն։ ա. Յորում Պետրոսի վարդապետութիւնն վասն նորին ի մարգարէից, վասն չարչարանացն եւ յարութեանն եւ վերանալոյն Քրիստոսի եւ պարգեւաց հոգւոյն սրբոյ։ բ. Վասն հաւատոց այնոցիկ, որ անդ գիպեցան եւ մկրտութեամբ փրկութեանն նոցա։ գ. Վասն միաբանութեան հասարակացն ազգի եւ յաւելուածութեան հաւատացելոցն։

Դ. Վասն Քրիստոսիւ բժշկութեանն ի ծննդենէ կաղոյն եւ Պետրոսի յանդիմանաւոր վարդապետութեանն, վշտակցութեամբ եւ խրատտուութեամբ վասն նոցա փրկութեանն։ ա. Յորում խուժանն յարուցեալ քահանայապետիցն առ նախանձու վասն իրացն գործելոց եւ քնին[1] սքանչելեացն եւ Պետրոսի դաւանութիւնն Քրիստոսի (զաւրութեանն) եւ

իսկ Ա ունի ժգ, նոյնպէս A ունի ժգ, զոր Սարգիսեան վրիպմամբ "Գլուխք գործոց առաքելոց„ին կը նախադրէ, Ցուցակ Ա, էջ 36, իսկ Ո ունի ծգ, զոր Միաքճեան նոյնպէս "Գլուխք գործոց առաքելոց„ին կը նախակարգէ, Ցուցակ, էջ 12։

1 Է գլուխ գործոց առաքելոյն ‖ 2 Բ վարդապետութեան։ ԱԲԷ չէք եւ (վասն աւետեաց) ‖ 3 Բ հոգւոյն սրբոյ պարգեւեաց, Է սրբո հոգոյն պարգեւեաց ‖ 3—4 Եւ տեսանելոյ — Քրիստոսի = θεάστε, καὶ τρόπου τῆς ἀναλήψεως τοῦ Χριστοῦ ‖ 5 խաւսք = διάλογος. ԱԷ խոստման ‖ 6 Գ եւ Բագր. չէք ընդ։ Փոխանակ ընդ նորա մուտն = ἀντεισαγωγή. Գ եւ Բագր. վիճակելոյն ‖ 8 Է հոգոյն։ Ա իջանելով։ Բ յաւրն։ Ա պենտեկոստէից, Բ պենդէկոստէից, ԳԷ եւ Բագր. պենտակոստէից = πεντηκοστῆς. Բ ի վերա հաւատացելոց ‖ 9 Վարդապետութիւն = κατήχησις ‖ 10 Բ յարութեան ‖ 11 Է անդն։ ԱԲԷ մկրտութեան, Գ եւ Բագր. մկրտութեամբ = διὰ τοῦ βαπτίσματος. Ա փրկութեան ‖ 12 Վասն միաբանութեան հասարակացն ազգի = περὶ ὁμονοίας κοινωφελοῦς. Յաւելուածութեան = προσθήκης. Գ. գլուխը հինգ ստորաբաժանում ունի յոյնին մէջ ա. Յորում... բ. Վասն նորին... գ. Վասն չարչարանացն... դ. Վասն հաւատոց... ե. Վասն միաբանութեանն ‖ 14 ԲԳ եւ Բագր. Քրիստոսի։ Բ բժշկութեան։ Է ի ծնէ։ ԱԲԷ կաղին ‖ 14—15 Յանդիմանաւոր — փրկութեանն = κατηχήσεως ἐλεγκτικῆς, συμπαθητικῆς, συμβουλευτικῆς πρὸς σωτηρίαν αὐτῶν ‖ 15 Է խրատովութեամբ։ Ա փրկութեան, Գ եւ Բագր. վասն փրկութեան նոցա ‖ 16 Ա խուժան, խուժանն յարուցեալ = ἐπιστασία. Ա գործելոյ։ Վասն իրացն գործելոց = τοῦ γεγονότος ‖ 17 Ա նքէյ, Բ սքանչելիսցրն (sic), Է սքանչելոյ։

---

նոցանէ որ եւ մանաւոր ներքնաբաժինս ունին կարմրադեղով„, էջ 130, ծ. 2 = ἐχόντων τινῶν καὶ μερικὰς ὑποδιαιρέσεις) առիթ տուած են հայ մատենագիրներու Եւթաղի գործերուն մէջ հիւսելու նաեւ "գմասնաւորս„, այսպէս, ինչպէս վերը նկատեցինք, էջ 10, Կայսերաց գիրքը կը գրէ "Եւթաղ Աղեքսանդրացի... գգլուխս եւ զմասնաւորս եւ զվկայութիւնս եւ զտունս կարգեաց„, Բազմավէպ 1877, էջ 205, զոր բառական կը կրկնաբանէ Շիրակացին, Ժամանակագրութիւն, էջ 56 եւ Ասողիկ, Պատմութիւն, էջ 139, ինչպէս նաեւ Որոտնեցին, որ կը գրէ՝ "եւ է տեղիս տեղիս կարմիր գիր միայն առանձնակի դրոշմեալ, այս զմասնաւորսն ցուցանեն„, տես վերը էջ 103։

[1] ԲԱՌԱՔՆՆՈՒԹԻՒՆ՝ Բի աւանդած հաղուագիւտ այս ընթերցուածը "քննութիւն, հարցափորձ, դատաստան„ իմաստով լաւագոյնս կը համընթանայ նախաբնագրին ներկայացուցած κρίσις τοῦ θαύμα-

digitised by

շնորհաց։ բ. Վասն սպառնալեաց քահանայապետացն թէ չէ աւրէն համարձակել յանուն Քրիստոսի եւ չառնլոյ յանձն առաքելոցն։ գ. Գոհութիւն յեկեղեցւոյն վասն առաքելոցն յաղագս հաւատոցն ժուժկալութեան։

Ե. Վասն համաշունչ համաւրէն հաւատացելոցն միաբանութեան։ ա. Յորում վասն Անանիայ եւ Սափիրայ եւ դառն վախճանի նոցա։

Զ. Թէ զառաքեալսն արկեալս ի բանտ հրեշտակ Աստուծոյ եհան ի գիշերի եւ համարձակեաց նոցա անխափան քարոզել զՔրիստոս։ ա. Յորում ի վաղիւ անդր զնոսա միւսանգամ քահանայապետացն ըմբռնեալ պատուիրէին զի մի իշխեսցեն այլ եւս ուսուցանել եւ գան հարեալ արձակեցին։ բ. Եւ Գամաղիէլի հաւատարիմ խրատն վասն առաքելոցն աւրինակս ինչ ի մէջ բերելով եւ յայտնի առնելով։

Է. Վասն ձեռնադրութեան եւթանց սարկաւագացն։

Ը. Վասն հրէիցն ի վերայ յառնելոյ եւ զրպարտութիւն զՍտեփանոսէ խաւսելոյ եւ նորա հրապարակախաւս լինելոյ վասն առ Աբրահամ ուխտին Աստուծոյ եւ վասն երկոտասանից նահապետացն։ ա. Յորում վասն սովին եւ ցորենավաճառութեան եւ ճանաչելոյ որդւոցն Յակովբայ զՅովսէփ եւ վասն ծննդեանն Մովսիսի եւ աստուածայայտնու-

22 առանց բացառութեան ունին զաւրութեանն եւ կ'անտեսեն շնորհութեանն, զոր անցուցի բնագրին մէջ համաձայն յոյնին՝ Πετροῦ τε ὁμολογία τῆς Χριστοῦ δυνάμεώς τε καὶ χάριτος ‖ 1 Բ համարձել ‖ 2 Բ յանձ. Է եկեղեցոյն ‖ 3 Բ հաւատոյն ‖ 4 Վասն համաշունչ — միաբանութեան = περὶ ὁμοψύχου καὶ καθολικῆς κοινωνίας τ. π. Գ եւ Բագր. յորում եւ ‖ 5 Բ Սապփիրայ. Է վախճանին ‖ 6 Ա ի բանդ. ԱԲԳ եւ Բագր. արկեալ, միայն Է արկեալս = ἐμβληθέντας. ԱԷ գիշերի ‖ 8 Բ միւսանգամն. Է պատուիրեցին. Գ եւ Բագր. չիք եւս, Բ զմի մի եւս իշխեսցեն այլ ուս. ‖ 10 Գ եւ Բագր. եւ աւրինակս. Աւրինակս — առնելով = μετὰ παραδειγμάτων τινῶν καὶ ἀποδείξεων ‖ 11 Բ եւթանց սարկաւագաց, Գ եւ Բագր. եւթանցն սարկաւագաց ‖ 12 Ա վերայ. Բ առնելոյ. Է վերայ յառնեմ — ἐπανάστασις. Զրպարտութիւն — խաւսելոյ = συκοφαντία κατὰ Στεφάνου ‖ 13 Բ հրապարակաւս. Հրապարակախաւս լինել = δημηγορία, Ա չիք եւ նորա հրապարակախաւս լինելոյ. Ա Աբրաամ, Բ Աբրահամու ‖ 14 Ա յորում եւ. Գ եւ Բագր. ցորենավաճառութեանն = πυρωνίας ‖ 15 Է որդոցն. ԱԷ Յակոբայ. ԱԲ Մովսեսի. Գ եւ Բագր. աստուածյայտնութեանն, Ա աստուածյայտնութեան նորա, Է աստուածայայտնութեանն նորա։

---

τος բառին հետ, մինչդեռ ԱԳԷ եւ Բագր. օրինակներու պահած «քնին» (ԱԷ՝ «քննին») ձեւը չի համապատասխաներ Եւթաղի արտայայտել ուզած մտքին. Համմատէ Գործք Առաք., Դ, 5—7 “եւ եղեւ ի վաղիւ անդր ժողովել նոցա զիշխանսն եւ զերիցունսն ... եւ կացուցեալ զնոսա ի մէջ հարցանէին, որո՞վ զաւրութեամբ կամ որո՞վ անուամբ արարէք դուք զայդ„, ուր, ինչպէս ակնյայտնի կը տեսնուի, չկայ խնդիր “անքնին„ աքանչելիքներու շուրջ, այլ միայն հրապարակային հարցում թէ “որո՞վ զաւրութեամբ կամ որո՞վ անուամբ„ այս աքանչելիքները կը գործուին։ — Դասական գարուն քնին χρίσις նշանակութեամբ եւ առանձնակաց միայն այս տեղ չէ որ կը գործածուի, Եփրեմ Թարգմանիչը գիտէ օգտագործել բառս մօտաւորապէս նոյն իմաստով եւ առանձին՝ իր կերտած սա նախադասութեան մէջ՝ “քննիչն, որ քննէ ճարտարութեամբ եւ խորագիտութեամբ զքնինս աշխարհիս այսորիկ„, Գ, էջ 53, նոյնպէս Ոսկեբերանի Թարգմանիչը՝ “չիք քնին հանճարոյ նորա„, Մեկն. Ես., էջ 194, մինչ այլուր կը գործածուի միշտ “անկանիմ, առնեմ, արկանեմ, գամ, լինիմ եւ մտանեմ բայերու կողքին, այսպէս “յորժամ ի քնի՞ն անկանիցին վասն նորա„, Ոսկեբ., Մեկն. Պաւղ., էջ 552. “հարց եւ քնին առնել„, Բուզ., էջ 56. “ի խոյզ եւ ի քնին արկանել„, Ոսկեբ., Մեկն. Ես., Բ, էջ 223. եկեսցուք յիրացն խոկ ի քնին, Եզն., էջ 35 կամ “խաւսքն, որ արտաքս ելանեն, ի քնինս գան„, Ոսկեբ., Մեկն. Մտթ. Ա, էջ 616. “լեր գործաւէր, ջանաւէր եւ ի քն[ն]ին լիջիր մնացելոցն, Կիւր., Կոչ. ընծ., էջ 242. “ի քնին մտեալ զիմ բանսն (տպ. բանքս) քննիցէք„, Բարս., Վեցաւր., էջ 106 կամ “որ միանգամ ընդ քնին մտեալ էին ի դպրութեանն ելից„, Եւսեբ., Եկ. Պտմ., էջ 602։

*թեանն նմա ի լերինն Սինայի, վասն ելիցն եւ որթագործութեանն Իսրայէլի մինչեւ ի ժամանակս Սողոմոնի եւ տաճարին շինելոյ: Դաւանութիւն վասն երկնաւոր փառացն Յիսուսի Քրիստոսի որ յայտնեցան նմա, վասն որոյ քարկոծ եղեւ Ստեփանոսի հանդերձ աստուածպաշտութեամբ:*

*Թ. Վասն հալածանաց եկեղեցւոյն եւ թաղմանն Ստեփանոսի: ա. Յորում վասն Փիլիպպոսի առաքելոյ ի Շամրին զբաղում բժշկելոյ:*

*Ժ. Վասն Սիմոնի կախարդի որ հաւատացն եւ մկրտեցաւ հանդերձ բազում ընկերաւք. ա. Եւ վասն Պետրոսի եւ Յովհաննու առ նոսա առաքելութեան եւ կոչման հոգւոյն սրբոյ ի վերայ մկրտելոցն:*

*ԺԱ. Զի ոչ արծաթով եւ ոչ կեղծաւորաց, այլ արժանեացն հաւատովք հաղորդութիւն հոգւոյն սրբոյ պարգեւի. ա. Յորում վասն կեղծաւորութեանն եւ սաստելոյ Սիմոնի:*

*ԺԲ. Թէ բարեաց եւ հաւատացելոց յաջողէ Աստուած զփրկութիւն, եւ յայտ ի ներքինւոյն իրաց է:*

*ԺԳ. Վասն յերկնից աստուածեղէն կոչմանն Պաւղոսի յառաքելութիւնն Քրիստոսի: ա. Յորում վասն բժշկութեանն եւ մկրտութեանն Պաւղոսի ի ձեռն Անանիայի ըստ յայտնութեանն Աստուծոյ, համարձակութեան նորա եւ հասանելոյ առ առաքեալսն ի ձեռն Բառնաբայ:*

*ԺԴ. Վասն Ենեայ անդամալուծի բժշկելոյ ի Լիդիա ի ձեռն Պետրոսի: ա. Յորում վասն Տաբիթայ, որ զայրիսն սիրէր, զոր յարոյց ի մեռելոց Պետրոս աղաւթիւք ի Յոպպէ:*

*ԺԵ. Վասն Կոռնելի, որչափ ընդ նմա հրեշտակն խաւսեցաւ եւ որքան դարձեալ Պետրոսի յերկնից վասն կոչմանն հեթանոսաց ասացաւ: ա. Յորում թէ յորժամ կոչեցաւ Պետրոս եկն առ Կոռնելիոս: բ. Երկրորդութիւն բանիցն, զորս հրեշտակն ուսուցեաց եւ պատմեաց Կոռնելի: գ. Պետրոսի վարդապետութիւնն ի Քրիստոս եւ հոգւոյն սրբոյ ի վերայ լսողացն պարգեւք եւ թէ զիարդ մկրտեցան նոյն ժամայն ի հեթանոսացն հաւատացեալք:*

*ԺԶ. Պետրոս մի ըստ միոջէ զեղեալ գործսն պատմէր առաքելոցն, որք էին խղճիւ ի նմանէ, յորժամ զԲառնաբաս առաքեցին առ եղբարս որ յԱնտիոքն էին:*

1 Բ Տա (sic) փխնկ նմա: Ա Սինայ: Գ որ թագաւոր ածութեանն փխնկ որթագործութեանն = *μοσχοποιίας*. Բ ելի ‖ 2 Բ Սաղոմոնի, Է Սողոմոնի: Բ փառաց ‖ 3 ԱԷ քարկոծեալ: Գ Ստեփաննոս, Բ վասն որո քարկոծն եղեւ Ստեփանոսի. Ը գլուխը ԱԲԳ եւ Բ ագր. կը ներկայացնեն մէկ ստորաբաժանումով, իսկ Է կու տայ անբնականօրէն երկու ստորաբաժանում՝ ա. Վասն առ Աբրահամ ... բ. Յորում վասն սովին. յոյնը ունի երեք ստորաբաժանում՝ ա. Յորում վասն սովին ... բ. Վասն ելիցն ... գ. Դաւանութիւն ‖ 5 Է յորում վասն հալ. եկեղեցւոյն: ԱԲ Փիլիպոսի ‖ 6 Ա առաքելոյն: Բ ի Շամրի զբաղում աշակերտելոյ ‖ 7 Է չիք Ժ: ԱԷ Սիմոնի: Ա հաւատայ ‖ 8 Է Յոհաննու ‖ 10 Ա եւ ոչ ոսկւով փխնկ եւ ոչ կեղծաւորաց ‖ 11 Է հոգւոյն: Է կեղծաւորութեան: ԱԲԷ սաստելոյն ‖ 12 ԱԷ Սիմոնի ‖ 13 Գ եւ Բ ագր. աջողէ ‖ 14 Բ յայտնէ: Է ներքինոյն: Եւ յայտ — է = *δῆλον ἐκ τῆς κατὰ τὸν εὐνοῦχον ὑποθέσεως* ‖ 15 Ա յառաքելութիւն ‖ 16 Ա չիք ա: Գ եւ Բ ագր. բժշկութեան եւ մկրտութեան... Անանիայ ‖ 17 ԲԷ եւ համարձակութեան: Ա համարելոյ փխնկ հասանելոյ: Է առաքեալսն ‖ 19 Ա Ենեա, Է Եննեա... եւ բժշկելոյ: ԱԲ ի Լիդա, Է ի Լեդիայ ‖ 20 ԲԷ յարոյցն ‖ 21 Բ վասն կոռնիելի ձախակողման լուսանցքին վրայ կը դնէ ԺԵ, իսկ աջակողման լուսանցքին վրայ բ: Ա Կուռնելիոսի, ԲԳ եւ Բ ագր. բարբարիկ՝ կոռնիելի, Է միայն կոռնելի, զոր կը նախընտրեմ ‖ 22 ԱԷ ի յերկնից: Գ եւ Բ ագր. կոչման: ԱԷ եթէ ‖ 23 Ա կուռնելիոս: Գ եւ Բ ագր. զոր ‖ 24 Ա կուռնելի, Բ կոռնիելի: Է գի փոխարէն ունի ԺԶ ‖ 25 Ա պարգեւաւք ‖ 26 Է ԺԶի տեղ ունի կարմրագիր ա: Մի ըստ միոջէ զեղեալ գործսն = *τὰ καθεξῆς καὶ τὰ ἕκαστα τῶν γεγονότων* ‖ 27 ԱԲԷ եղբարս: ԱԷ յԱնտիոք:

digitised by

*ԺԷ. Մարգարէութիւն Ագաբայ վասն համաշխարհական սովոյն եւ վասն երախայ-րեաց եղբարցն որ յՆրուսաղէմ։*

*ԺԸ. Ցակովբայ առաքելոյ սպանումն եւ Պետրոսի ըմբռնելն ի Հերովդէ եւ թէ որպէս հրեշտակ Աստուծոյ զերծոյց զնա ի բանտէն եւ թէ որպէս Պետրոս գիշերայն յայտնեցաւ եղբարցն եւ գնաց։ ա. Ցորում վասն պահապանացն տանջանաց եւ յետոյ վասն ամպարշտին Հերովդի դառն եւ սատակիչ կործանմանն։*

*ԺԹ. Առաքելութիւն Բառնաբայ եւ Պաւղոսի յաստուածեղէն հոգւոյն ի Կիպրոս եւ զոր ինչ միանգամ արարին նոքա յանուն Քրիստոսի ընդ Եղիմաս մոգ։*

*Ի. Պաւղոսի ծաղկազարդ վարդապետութիւնն ի Քրիստոս յարինաց անտի եւ կարգաւ ի մարգարէից՝ պատմականն եւ աւետարանականն։ ա. Ցորում եւ ընտրականն եւ խորհրդականն։ բ. Վասն փոփոխելոյ քարոզութեանն ի հեթանոս եւ հալածանացն նոցա անտի եւ երթալոյ յԻկոնիոն։*

*ԻԱ. Թէ զիարդ յԻկոնիոն քարոզեցին զՔրիստոս, ուր բազումք հաւատացին եւ հալածեցան առաքեալքն։*

*ԻԲ. Վան ի Լիւստրոս[1] ի ծննդենէ կաղին բժշկելոյ ի ձեռն առաքելոցն, վասն որոյ*

1 Է երեխայրեաց = καρποφορίας ‖ 2 Ա եղբարց յԵրմ, Է եղբարց որ յԵրմ ‖ 3 ԱԷ Ցակոբու, Բ Ցակովբու։ ԱԲԷ սպանումն։ Բ ըմբռնել, Ա ըմբռնելն, Գ եւ Բ ա գ ր. ըմբռնելն Պետրոսի ‖ 4 Ա չեք զնա, Բ ի բանդէն։ Գ գիշերոյն, Ա ի գիշերնոյն ‖ 5 Բ եղբարաց, ԱԷ եղբարց։ Գ եւ Բ ա գ ր. տանջանացն, Է չեք տանջանաց ‖ 6 ԱԲԷ ամբարշտին։ Ա Հերովդէի։ Է սատրիկ փինկ սատակիչ = ὀλέθριος. Ա կործանման։ ԺԸ. գլուխը յոյնին մէջ ունի երկու ստորաբաժանում՝ ա. Եւ Պետրոսի ըմբռնելն... բ. Ցորում վասն պահպանացն ‖ 7 Է հոգւոյն։ ԱԷ չեք Ե–, Բ եւ որ ինչ ‖ 8 Բ արարինն, Գ եւ Բ ա գ ր. չեք յանուն Քրիստոսի = ἐν ὀνόματι τοῦ Χριστοῦ. Ա Եղիմաս, Բ Եղիմա ‖ 9 Բ Պողոսի։ Ծաղկազարդ վարդապետութիւնն = εὐθαλὴς διδασκαλία. Բ յարինացն ‖ 10 ընտրականն եւ խորհրդականն = ἐλεγκτικὴ καὶ συλλογιστικὴ ‖ 11 Բ փոփոխելոյն, Ա փոխելոյ... հալածանաց։ Վասն փոփոխելոյ = περὶ μεταθέσεως. Է ի հեթանոս ‖ 12 Է յԻկոնեոն, Ա ի յԻկոնիոն, Է յԻկոնոն։

---

[1] ԲԱՌԱՔՆՆՈՒԹԻՒՆ՝ The variation in the declension of the word Lystra (accusative Λύστραν, Act. XVI, 1, dative Λύστροις XIV, 8, XVI, 2) is sometimes taken as a sign that the author employed two different written authorities (in one of which the word was declined as feminine singular and in the other as neuter plural), and followed them implicitly, using in each case the form employed in the authority whom he was following at the moment... We have unfortunately no authorities for the Lystran usage: the city name occurs in the inscriptions only in the nominative case Lustra. It is certain that many names in Asia Minor, such as Myra etc. occur both in feminine singular and in neuter plural, but there is no evidence as to any local usage appropriating certain cases to each form, Ramsey, St. Paul the traveller, էջ 129. Ἡ Λύστρα իգական ու τὰ Λύστρα անեզական չէզոքն իրենց բնական հոլովակերտ վերջաւորութիւններով երկու տարբեր ձեւերու ծնունդ տուած են նաեւ հայերէնի մէջ. առաջինը կանոնաւորապէս փոխադրուած է եւ եղած Լիւստրա եւ կամ տարաձեւ Լիւստրիա այսպէս՝ "ապդ եղեալ նոցա փախեան ի քաղաքսն Լիկոնացւոց եւ ի Լիւստրա եւ ի Դերբէ", Գործք Առաք., ԺԴ, 6 = εἰς Λύστραν, "եւ աշակերտեալ զբազումս դարձան ի Լիւստրա եւ յԻկոնիոն եւ յԱնտիոքիա", անդ, 20 = εἰς τὴν Λύστραν, "եւ եկն եհաս ի Դերբէ եւ ի Լիւստրա", անդ, ԺԶ, 1 = εἰς Λύστραν, "եւ Լիւստրա ուստի Տիմոթէոսն էր", Ոսկեբ., Մեկն. Պղ. Ա, էջ 248 = Λύστρα, "եկն... յԻկոնիոն եւ անտի ի Լիւստրա", Եւթաղ, Ընթացք (երկիցս) = εἰς Λύστραν, "եւ եկին նոքա ի Լիւստրիա", Եփրեմ, Մեկն. գծ. (հրատ. Ակինեան), էջ 24։ Իսկ երկրորդը, որ ներկայացած է միայն ἐν Λύστροις տրականավերջ եւ Λύστρων սեռականայանդ տարազներու տակ, հայ

եւ աստուածս եկեալս համարեցան զնոսա, որ էին ի տեղեանն: ա. Ուր եւ յետոյ քարկոծ լինէր Պաւղոս յարուարձանեայց քաղաքին:

ԻԳ. Թէ ոչ է պարտ թլփատել զհաւատացեալսն ի հեթանոսաց հրամանաւ եւ ընտրութեամբ առաքելոցն: ա. Ցորում եւ թուղթն նոցա առ այնոսիկ, որ ի հեթանոսացն էին վասն պահելեացն պարտոյից: բ. Դիմադարձութիւն Պաւղոսի ընդդէմ Բառնաբայ վասն Մարկոսի:

1 Ա որ ի տեղին էին: Վասն որոյ — ի տեղին = διόπερ εἶναί τε θεοὶ καὶ παρεῖναι ἔδοξαν τοῖς ἐγχωρίοις. Ա ուստի եւ ‖ 2 Ա չէք Պաւղոս: Գ եւ Բագր. յարուարձանեաց, չէք քաղաքին: Յարուարձանեայց քաղաքին = παρὰ τῶν Ἰουδαίων ἀστυγειτόνων. ԻԲ. գլուխը ստորաբաժանում չունի յոյնին մէջ ‖ 3 Ա չէք եւ: Բ ոչ պարտ է: Հրամանաւ եւ ընտրութեամբ = δόγματι καὶ κρίσει ‖ 4 Ա թողութիւն փխնկ թուղթն ‖ 5 Ա վասն պար ելեացն (sic) պիտոյից, Է վասն պարհելեացն պարտոյից, Բ պարտոյից, Գ եւ Բագր. պարտոյիցն = περὶ τῶν φυλ·κτέων. Դիմադարձութիւն = ἀντίρρησις:

---

Թարգմանչական դպրոցին մէջ կամ, նուազ հաւանականութեամբ, ըմբռնուած է սխալ *Λύστρος = Լիւստրոս եւ կամ, որ առաւելապէս հաւանական է, յունաձեւ տրականով անփոփոխ բայց բարբարիկ շրջուած է պարզապար հայերէնի. առաջին նուազ հաւանական ենթադրութիւնը հաստատել կը թուի ուեթաղեան վերեւ յառաջ բերուած շատ կասկածելի "մինչեւ ցԼիւստրոս„ տեղէքէն զատ (յոյնն ունի հոս ἕως Λύστρων) նաեւ սա վկայութիւնը՝ "եկին հասին ի Լիւստրոս„, Եփրեմ, Մեկն. գծ., էջ 28, մինչ երկրորդ աւելի հաւանական վարկածին ույժ կու տան միահամուռ՝ ներքոյականաձեւ կանոնաւոր սա օրինակները՝ "որպիսիք եղեն ինձ յԱնտիոք եւ յիկոնիոն եւ ի Լիւստրոս„, Բ. Տիմոթ., Գ, 11 = ἐν Λύστροις, "ի Լիւստրոս դարձեալ չարախաւսութեամբ հրէիցն... քարակոծ արարին զՊաւղոս„, Եփրեմ Գ, էջ 255 եւ ուեթաղեան այս տեղէքը: Նման յունաձեւ հոլովման դէպքեր ցանցառ չեն դասական մատենագրութեան մէջ, առ այժմ մեզ մերձուստ հետաքրքրող յունավերջ տրական հոլովման իբր օրինակ կը բերեմ նկարագրական սա տեղէքները՝ "որ ի Թերմոպուլիս կռիւն եւ ի Սալամին նաւամարտիկն„, Եւսեբ., Քրոն., Բ, էջ 208 = ἡ ἐν Θερμοπύλαις μάχη, καὶ ἡ ἐν Σαλαμῖνι ναυμαχία, "ի Պղատէս կռիւն եւ որ ի Միկաղէ[ս]ն„, որուն յունարէնն էր անտարակոյս ἡ ἐν Πλαταιαῖς μάχη եւ այլն: Հայ թարգմանիչները կանոնաւոր Լիւստրա եւ անկանոն Լիւստրոս բառերէն զատ գիտցած են կերտել իսկապէս հայատիպ դարձուածներ ալ, այսպէս՝ "եւ այր ոմն ի Լիւստրացի„, Գործք Առաք. ԺԴ, 7 = καί τις ἀνὴρ ἐν Λύστροις, "որ վկայեալ էր ի Լիւստրացւոց եւ յիկոնացւոց եղբարց„, անդ, ԺԶ, 2 = ὑπὸ τῶν ἐν Λύστροις καὶ Ἰκονίῳ ἀδελφῶν, "որպիսի ինչ իրք, ասէ, անցին ընդ իս յԱնտիոք եւ յիկոնացւոց եւ ի Լիւստրացւոց քաղաքին„, Ոսկեբ., Մեկն. Պղ., Ա, էջ 248, "նոյնպէս եւ զՊաւղոս եւ զԲառնաբաս բնակիչք Լիւստրացւոց քաղաքին տեսեալ ախտանային„, անդ, էջ 271 = τοὺς τὴν Λύστραν οἰκοῦντας, "(զսքանչելիսն) ի քաղաքին Լիւստրացւոց ի վերայ ուղնոյն բժշկութեան„, Կիւր., Կոչ. Ընծ., էջ 388 = ἐν Λύστροις, "որպիսի իրք անցին ընդ իս ի կողմանս Անտիոքացւոց եւ յիկոնիացւոց եւ ի Լիւստրացւոց„, Եփր., Գ, էջ 255:

Հ. Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆ

(Շարունակելի:)